

01/10.1/3280-09

2009-05-19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վարդան Բոստանջյանի, Արա Նռանյանի, Ռուզաննա Առաքելյանի, Գոհարիկ Ենոքյանի, Սամվել Նիկոյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

1. 1-ին հոդվածը չի բխում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածի և 51-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից:

Նույն դիտողությունը վերաբերում է նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետին:

2. 2-րդ հոդվածի`

1) 1-ին կետն ընդունելի չէ, քանի որ հիշյալ հոդվածով նախատեսված հանցագործությունը տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություն է և, այդ առումով, քրեական պատասխանատվություն պետք է առաջանա միայն իրացման նպատակով կեղծ գինի, օղի կամ ալկոհոլային կեղծ այլ խմիչք պատրաստելու համար.

2) 3-րդ կետով առաջարկվող լրացումը չի համապատասխանում հոդվածի բովանդակությանը, քանի որ հոդվածի դրույթները վերաբերում են կեղծ գինի, օղի կամ այլ կեղծ խմիչքներ պատրաստելուն կամ իրացնելուն, իսկ նախագծի լրացումը վերաբերում է ընդհանրապես կեղծ ապրանքներ իրացնելուն: Բացի դրանից, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 212-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում սպառողներին խաբելու համար: Ասվածից հետևում է, որ հոդվածում լրացում կատարելու անհրաժեշտություն չկա:

Միաժամանակ նպատակահարմար ենք գտնում քննարկել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 207-րդ հոդվածի հստակեցման հարցը, քանի որ`

1) եթե ալկոհոլային կեղծ խմիչքներն իրացման նպատակով պատրաստվել կամ իրացվել են առանց պետական գրանցման կամ առանց հատուկ թույլտվության (լիցենզիայի), ապա այդ դեպքում նշված գործողությունները կարելի է որակել որպես ապօրինի ձեռնարկատիրություն (հոդված 188).

2) եթե Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 207-րդ հոդվածով նախատեսված գործողություններն իրականացվել են ապրանքային նշանը, սպասարկման նշանը, ֆիրմային անվանումն ապօրինի օգտագործելով, ապա այդ դեպքում կոնկրետ

անձը կարող է պատասխանատվության ենթարկվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 197-րդ հոդվածի պահանջներին համապատասխան.

3) որոշ դեպքերում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 207-րդ հոդվածով նախատեսված գործողությունները կարող են որակվել որպես խարդախություն:

Ելնելով նշվածից՝ գտնում ենք, որ հստակեցման կարիք ունի «ավլոհոլային կեղծ խմիչք» հասկացությունը, ինչը կապահովի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 207-րդ հոդվածի լիարժեք կիրառումը:

3. 3-րդ հոդվածի անհրաժեշտությունը չկա, քանի որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 197-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ապրանքային նշանն ապօրինի օգտագործելու համար:

4. Նախագծում «ավելացնել» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացնել» բառով՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

1. 1-ին հոդվածը հստակեցման կարիք ունի, քանի որ ըստ ներկայացված նախագծի ստացվում է, որ ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար նախատեսվում է երկու տույժ, ինչը չի բխում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 24-րդ հոդվածի պահանջներից:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված նախագծերի փաթեթը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի և աննպատակահարմար է համարում ներկայացված տեսքով օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մալխասյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ

Պ-595-15.04.2009-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (18 ապրիլի 2003թ., ՀՕ-528-Ն) 188-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերում «չափով,» բառից հետո ավելացնել «ինչպես նաեւ գործունեության տվյալ տեսակի լիցենզավորման համար սահմանված պետական տուրքի գումարի չափով (եթե նման գործունեության տեսակի համար նախատեսված է լիցենզավորում եւ սահմանված է պետական տուրք),» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 207-րդ հոդվածում՝

1) վերնագրում «եւ» բառը փոխարինել «կամ» բառով եւ հոդվածի 1-ին մասում հանել «իրացման նպատակով» բառերը,

2) 1-ին եւ 2-րդ մասերում «հազարապատիկի» բառից հետո ավելացնել «եւ համապատասխան գործունեության տեսակի լիցենզավորման համար սահմանված պետական տուրքի գումարի» բառերը,

3) ավելացնել նոր՝ 4-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ՝

«4. Սույն հոդվածի համաձայն առևտրի կամ հանրային սննդի օբյեկտներում կեղծ ապրանքներ իրացնողը կրում է պատասխանատվություն, եթե հաշիվ-ապրանքագրերով եւ համապատասխան այլ փաստաթղթերով հնարավոր չէ պարզել կեղծ ապրանքներ պատրաստողին»:

Հոդված 3. Օրենսգրքի 212-րդ հոդվածի 1-ին մասում «վերաբերյալ» բառից հետո ավելացնել «կամ այլ ապրանքային նշանի, սպասարկման նշանի, ֆիրմային անվանման խեղաթյուրված, աղավաղված կամ շփոթության աստիճանի նմանությամբ օգտագործելու միջոցով» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Նախագիծ

Պ-595՝-15.04.2009-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (6 դեկտեմբերի 1985 թվականի) 169-րդ հոդվածում առաջին «չափով» բառը փոխարինել «եւ գործունեության տվյալ տեսակի լիցենզավորման համար սահմանված պետական տուրքի գումարի չափով (եթե նման գործունեության տեսակի համար նախատեսված է լիցենզավորում եւ սահմանված է պետական տուրք)» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ
ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում» եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում» առաջարկվող փոփոխությունները նպատակ ունեն արդյունավետ, կանխարգելիչ միջոցների ձեռնարկումը ապօրինի ձեռնարկատիրության եւ կեղծ ապրանքների արտադրության դեմ:

Միաժամանակ խնդիր է դրվում ապահովել ապօրինի գործունեություն իրականացնողների կողմից հասցված վնասի եւ կիրառվող պատժի համապատասխանությունը՝ մասնավորապես լիցենզավորում պահանջող գործունեության տեսակներով ապօրինի զբաղվելու դեպքում տուգանքի չափին գուզահեռ նաեւ լիցենզիայի դիմաց գանձվող պետական տուրքի չափով տուգանքի կիրառումը: Լիցենզավորման դիմաց գանձվող պետական տուրքի չափի կիրառումը որպես պատժամիջոց արդեն գործադրված է օրենսգրքում ապօրինի շահումով խաղերի կամ խաղատնային գործունեության կազմակերպման նկատմամբ:

Առաջարկվող փոփոխությամբ նաեւ ապահովվում է համապատասխանությունը կեղծ ապրանքների պատրաստման եւ իրացման հողվածի վերնագրի եւ բովանդակության միջեւ, հստակեցվում է նման գործունեության մասով առեւտրի եւ հանրային սննդի օբյեկտներում իրացում իրականացնողների պատասխանատվության դեպքերն ու աստիճանը, ինչպես նաեւ սպառողներին խաբելու ձեւերին է դասվում այլ ապրանքային

նշանի, սպասարկման նշանի, ֆիրմային անվանման խեղաթյուրված, աղավաղված կամ շփոթության աստիճանի նմանությամբ օգտագործումը:

Այսպիսով, առաջարկվող փոփոխությունները ամբողջացնում են պատասխանատվության շղթան այն խախտումների նկատմամբ, որոնք ներառում են ապօրինի ձեռնարկատիրությունը, առանց լիցենզիայի գործունեությունը, լիցենզիայի առկայության դեպքում կեղծ ապրանքների արտադրությունը, ինչպես նաև այլ ապրանքանիշերի խեղաթյուրման եւ շփոթության աստիճանի նմանության միջոցով սպառողների խաբելը:

Հեղինակներ՝ Վարդան Բոստանջյան, Արա Նոանյան, Ռուզաննա Առաքելյան, Գոհարիկ Ենոքյան, Սամվել Նիկոյան